«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ 02/11

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահը,

Հաշվի առնելով Կոմիտեի կողմից 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 12 արձանագրության 2-րդ կետով արձանագրված որոշման մեջ տեղ գտած վրիպակը,

Հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 8-րդ հոդվածը՝

Որոշեց՝

1. Կոմիտեի 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 12 արձանագրության մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ և 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.
«
   1. **30.10.2022թ-ի «Շիրակ»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-070) խաղի ժամանակահատվածում հաշիվը արտացոլող էլեկտրոնային լուսատախտակը չաշխատելու վերաբերյալ:**

   Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

   Հաստատված համարել «Շիրակ» ՖԱ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:»

2. Հանձնարարել Կոմիտեի քարտուղարին «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին պատշաճ ծանուցել սույն որոշման վերաբերյալ,
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Կ. Հովհաննիսյան

25.11.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. նոյեմբերի 24-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **23.11.2022թ-ի «Անդրանիկ ՖԱ-05»-«Ուրարտու-05» (18Ա-003) խաղի ժամանակահատվածում «Անդրանիկ ՖԱ-05» թիմի ֆուտբոլիստ Գոռ Կորյունի Գալստյանի (41514) կողմից անհասցե հայհոյանքներ թույլ տալու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Անդրանիկ ՖԱ-05» թիմի ֆուտբոլիստ Գոռ Կորյունի Գալստյանի (41514) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Անդրանիկ ՖԱ-05» թիմի ֆուտբոլիստ Գոռ

Կորյունի Գալստյանին (41514) կողմից որակազրկել 2 խաղով և «Անդրանիկ» ՖԱ ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

2. **30.10.2022թ-ի «Շիրակ»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-070) խաղի ժամանակահատվածում մրցավարներին փոխարինման սարքին էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» ՖԱ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

3. **06.11.2022թ-ի «Լեռնային Արցախ»-«Փյունիկ» (ՊԼ-074) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած կարգապահական խախտումների վերաբերյալ.**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ» ՖԱ ՍՊԸ կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և

1) հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Լեռնային Արցախ» ՖԱ ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»,
2) հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լեռնային Արցախ» ՖԱ ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. **11.11.2022թ-ի «Արարատ-Արմենիա»-«Փյունիկ» (ՊԼ-007) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած կարգապահական խախտումների վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 27-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Փյունի ՖԱ» ՀԿ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 27-րդ կետը՝ «Փյունի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

5. **22.11.2022թ-ի «Լեռնային Արցախ»-«Շիրակ» (ՊԼ-089) խաղի ժամանակահատվածում նախախաղային խորհրդակցությանը «Լեռնային Արցախ» թիմի՝ սահմանված անձանց չմասնակցելու և տոմսային համակարգի բացակայության վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ» ՖԱ ՍՊԸ կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և

3) հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «Լեռնային Արցախ» ՖԱ ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով,
4) հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լեռնային Արցախ» ՖԱ ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. 05.11.2022թ-ի «Ալաշկերտ-2»-«Լեռնային Արցախ-2» (ԱԽ-051) խաղը «Ալաշկերտ-2» թիմի կողմից չտեսագրելու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 42-րդ կետը՝ «Ալաշկերտ» ՖԱ ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

7. 01.11.2022թ-ի «Արարատ-Արմենիա-2»-«Արարատ-2» (ԱԽ-079) խաղի ժամանակահատվածում նախախաղային խորհրդակցությանը «Արարատ-Արմենիա-2» թիմի՝ սահմանված անձանց չմասնակցելու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «Արարարտ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

8. 11.11.2022թ-ի «Ալաշկերտ-2»-«ԲԿՄԱ-2» (ԱԽ-086) խաղը «Ալաշկերտ-2» թիմի կողմից չտեսագրելու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 42-րդ կետը՝ «Ալաշկերտ» ՖԱ ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով: